

բող միակ բնակչո-ւն-նը՝ Հայո-ւն-նը մինչե-
 ժԼ Դարո-ն իւրերը Բացառապէս քիսո-
 նեայ էր։ Նոյն միջոցին սկսած Բռնի իսլա-
 մացո-մը՝ կոտորածներով ալ՝ հսկայ չա-
 փեր առած է ժԼ Դարո-ն ընթացքին
 մէջ, շարունակուած նաեւ ժԹ դարուն։
 Բայց հայ նկարագիրը մնացած է ամէն կողմ,
 շատ տեղ տակաւին հայ վեղո-ն ալ։ Ծայրէ
 ծայր հայ անո-ններ համշէնէ ու Սեւ-
 Գեղոյ, Սեւ Ժովու վրայ՝ մինչեւ Բաքերդ-
 Սպեր եւ Կիսկիմ-Թորթում։ Խաղաղ
 վարչութեան մը առկ, երբ անհետանայ
 Թուրքի ու մահմետական բռնապետական
 ճնշումը, մահմետականութիւնն անշուշտ
 կը մնայ այս բնակչութեան մէջ. բայց հայ
 լիզուն յանկարծ պիտի լսուի նաեւ այն
 տեղ, որ լիովին թրքախօս եղած կ'երեւար։
 Յամենայն դէպս հայ-մահմետականը բարի
 դրացի մը պիտի ըլլայ քրիստոնեայ հայուն
 հետ, ինչպէս է արդէն շատ տեղ։

